օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով գնման գնի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից:

Տվյալ դեպքում Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվորի կողմից նախապես վճարվել է հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը՝ 147.000 ՀՀ դրամի չափով (33–րդ և 84–րդ չափաբաժինների մասով գնման գնի 1%)՝, իսկ հայցը՝ ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 33 չափաբաժնի մասով բավարարման ենթակա լինելու պայմաններում Դատարանը գտնում է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանից հօգուտ <<ՆԱՌ-ԱՎ>> ՍՊԸ-ի պետք է բռնագանձել 81.000 ՀՀ դրամ (33–րդ չփաբաժնի մասով գնման գնի 1%)՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ պետական տուրքի հարցը՝ 66.000 ՀՀ դրամի մասով պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. <<ՆԱՌ-ԱՎ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզպետարանի՝ ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով գնման ընթացակարգը թիվ 33 և 84 չափաբաժինների մասով կայացած համարելու և պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի՝

թիվ ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով գնման ընթացակարգը թիվ 33 չափաբաժնի մասով համարել կայացած և պարտավորեցնել Արամավիրի մարզպետարանին <<ՆԱՌ-ԱՎ>> ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ ԱՄԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի հավելված 5-ով նախատեսված Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր:

Հայցը՝ մնացած մասով մերժել:

2. ՀՀ Արմավիրի մարզպետարանից հօգուտ <<ՆԱՌ-ԱՎ>> ՍՊԸ-ի բռնագանձել 81.000 (ութսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մանացած մասով, համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am